

ՍԱՀՄՈՍ 112

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
ՏԻՐՈՋԻՑ վախեցողի բարգավաճումը <u>MT ներածությունն չկա</u>	Արդարի օրհնված վիճակը	Արդարի և ամբարշտի հակադրվող ճակատագրերը (Իմաստասիրական Սաղմոս)	Բարի մարդու ուրախությունը	Շիտակ մարդու փառաբանությունը
112:1-6	112:1ա 112:1բ-դ 112:2-8	112:1-3 112:4-10	112:1ա 112:1բ-3 112:4-6 112:7-10	112:1ա 112:1բ-2 112:3-4 112:5-6 112:7-8 112:9 112:10

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ՀԱՄԱՏԵՔՍԱՑԻՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Տես Սաղմոս 111-ի Համատեքստային Հասկացությունները Սաղմոս 111 և Սաղմոս 112-ի միջև առկա ակնհայտ կապերի համար:

Բ. Սաղմոս 111 փառաբանում է ՅԱՀՎԵԻՆ, իսկ Սաղմոս 112-ը փառաբանում է հավատարիմ հետևորդին (տես՝ Սաղմոս 128):

1. նա վախենում է ՏԻՐՈՋԻՑ, Սաղմ. 112:1բ
2. մեծապես ուրախանում է Նրա պատվիրաններով, Սաղմ. 112:1գ (տես՝ Սաղմ. 1:2)
3. նրա սերունդը հզոր է լինելու երկրի վրա, Սաղմ. 112:2ա

4. նրանք օրհնվելու են, Սաղմ . 112:2բ
5. նրանք բարգավաճելու են, Սաղմ . 112:3ա
6. նրա արդարությունը մնում է հավիտյան, Սաղմ . 112:3բ
7. նա և իր ընտանիքը խավարի մեջ լույս ունեն, Սաղմ . 112:4ա
8. նա ողորմած է, Սաղմ . 112:4բ, 5ա, 9ա
9. նա գթած է, Սաղմ . 112:4բ
10. նա արդար է՝ շիտակ, Սաղմ . 112:4բ
11. նա իր գործերը արդարությամբ է դեկավարում, Սաղմ . 112:5բ
12. նա հավիտյան չի սասանվելու, Սաղմ . 112:6ա
13. նա և նրա ընտանիքը որպես արդար մարդիկ հավիտյան հիշվելու են, Սաղմ . 112:6բ
14. նա չի վախենալու չար՝ վատ լուրից, Սաղմ . 112:7ա
15. նրա սիրտը պատրաստ է (տես՝ Սաղմ . 57:7, 108:1), ՏԻՐՈԶՆ է վստահում, Սաղմ . 112:7բ (տես՝ Եսայի 26:3)
16. նրա սիրտը հաստատված է, BDB 701, KB 759, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ (այսինքն՝ Աստծով), Սաղմ . 112:8ա
17. նա չի վախենալու, Սաղմ . 112:8ա
18. նրա թշնամիները նրա առջևից պարտվելու են, Սաղմ . 112:8բ, 10ա
19. նրա արդարությունը հավիտյան է մնալու, Սաղմ . 112:9բ
20. նրա եղջյուրը պատվով է խոյանալու, Սաղմ . 112:9գ (տես՝ Սաղմ . 75:10)

Գ. Ի հակադրություն արդարի, ամբարիշտը վերապրելու է ճիշտ հակառակը: Նրանց ճակատագիրը հատկապես նշվում է Սաղմոս 112:10-ում:

1. ամբարիշտը տեսնելու է արդարի օրհնությունը և վշտանալու է
2. նրանք կրճատացնելու են իրենց ատամները
3. նրանք հալչելու են
4. նրանց ցանկությունը կորչելու է

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 112:1-6

¹Փառաբանեցե՛ք ՏԻՐՈԶԸ:

Երանի՛ այն մարդուն, որ վախենում է ՏԻՐՈԶԻՑ,
Որ մեծապես ուրախանում է Նրա պատվիրաններով:

²Նրա սերունդը հզոր է լինելու երկրի վրա,

Եվ շիտակների սերունդն օրհնվելու է:

³Առատություն ու հարստություն է լինելու Նրա տան մեջ
Ու Նրա արդարությունը հավիտյան է մնալու:

⁴Խավարի մեջ լույս է ծագում շիտակների համար,

Քանի որ Նա ողորմած, գթած ու արդար է:

⁵Բարի մարդը ողորմում է ու փոխ է տալիս,

Իր գործերը շրջահայացությամբ է կատարում:

⁶Հիրավի նա հավիտյանս չի սասանվելու.

Արդարի հիշատակը հավիտյան մնալու է:

112:1 «Փառաբանեցե՛ք ՏԻՐՈԶԸ» Տես Սաղմ . 111:1-ի գրառումը:

❖ «Երանի՛ այն մարդուն . . .» Սա իմաստասիրական բառապաշար է՝

1. երանի՛ (TEV, «երջանիկ»), Սաղմ . 112:1 – BDB 80 (տես՝ Սաղմ . 1:1, 119:1-2)

2. օրինված, Սաղմ. 112:2 – BDB 138
3. բարի (TEV, «ուրախ»), Սաղմ. 112:5 – BDB 373 II

❖ «վախենում է ՏԻՐՈՉԻՑ» Տես՝ Սաղմ. 111:10-ի գրառումը

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՎԱԽ (ՀԿ)

❖ «որ մեծապես ուրախանում է Նրա պատվիրաններով» ԲԱՅԸ (BDB 342, KB 339, *Qal* ՎԱ-ՂԱԿԱՏԱՐ) մատնանշում է անձի վերաբերմունքը ՅԱՀՎԵԻ հայտնության հանդեպ (տես՝ Սաղմ. 19:10, 111:2, 119:35): Հավատարիմ հետևորդը հնազանդվում է դրանց (տես՝ 2 Օր. 4:1-2, 14, 40, 16:12, 30:8, 16, 19-20, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ):

«Պատվիրանների» համար տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌ-ՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐ

112:2 Տաս Պատվիրաններից սովորում ենք, որ չարը փոխանցվում է սերունդների միջով (տես՝ Ելից 20:5, 2 Օրինաց 5:9,10), սակայն փառք Աստծուն, որ նաև հավատքն է փոխանցվում (տես՝ Ելից 20:6, 2 Օրինաց 5:10, 7:9, Ելից 34:7):

112:3ա Հիշե՛ք, որ սա ՀԿ-յան տեքստ է՝ Մովսիսական ուխտի «երկու ճանապարհը» (տես՝ Ղև-տացիների 26, 2 Օրինաց 27-28, 30:15-20, Սաղմոս 1, Առակ. 4:10-19, Երեմ. 21:8, Մատթ. 7:13-14): Սա չէր գործում մարդկության մեղավոր բնության պատճառով (տես՝ Ծննդոց 3, Հռոմեացիների 1-3, Գաղատացիների 3, Եբրայեցիների): Չգուշացե՛ք բարգավաճման շուրջ այս համարների տեքստային ապացույցներից, որպես թե դրանք ՆԿ-յան խոստումներ են:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ

❖ «առատություն և հարստություն» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ

112:4ա Այս արտահայտությունը ենթադրում է, որ հավատարիմ հետևորդը այս անկյալ դարի խնդիրների մեջ ունի այն հասկացողությունը, քանի որ՝

1. նա վախենում է ՅԱՀՎԵԻՑ, Սաղմ. 112:1բ, 7բ
2. նա ուրախանում է Նրա պատվիրաններով, Սաղմ. 112:1գ
3. նա ապրում է իր հավատքը, Սաղմ. 112:4բ-5
4. նա չի սասանվելու, Սաղմ. 112:6ա
5. նա չի վախենում, Սաղմ. 112:8ա

❖ «Ծագել» ԲԱՅԻ (BDB 280, KB 281, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) ԵՆԹԱԿԱՆ հստակեցված չէ: Այն կարող է վերաբերել հավատարիմ հետևորդին: *UBS Ձեռնարկը* (էջ՝ 960) առաջարկում է «նա խավարի մեջ լույսի պես է, որը շողում է պատվարժան (այսինքն՝ շիտակ, ԱՐԱԿԱՆ ՀՈԳՆԱԿԻ) մարդկանց համար»:

112:4բ Այս նույն առանձնահատկությունները ասվում են ՅԱՀՎԵԻ համար Սաղմ. 111:3բ, 4բ (տես՝ Ելից 34:6-7): Բանաստեղծության այս տողը ԵՆԹԱԿԱՆ կամ ԲԱՅ չունի, բայց ունի երեք ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ ԱԾԱԿԱՆ:

1. գթած – BDB 337
2. ողորմած – BDB 933
3. արդար – BDB 843

Սա կարող է վերաբերել ՅԱՀՎԵԻՆ (AB, էջ՝ 128): NIDOTTE, հատոր 2, էջ՝ 204, ասում է, որ «գթած՝ գթառատ» բառը կիրառվում է տասներեք անգամ և միշտ նկատի ունի ՅԱՀՎԵԻՆ, բացառությամբ Սաղմ. 112:4-ի: Սա ենթադրում է, որ Սաղմ. 112:4 ՅԱՀՎԵԻ մասին չէ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ (ՀԿ)

112:5 ՀԿ-ում ուխտի եղբայրները պետք իրար փոխ տային առանց շահույթի ակնկալության (տես՝ Ելից 22:25, Ղևտ. 25:35-38, 2 Օր. 15:7-8): Աղքատին օգնելը ՅԱՀՎԵԻՆ նվիրում ցուցաբերելու կերպ էր, որը հոգ է տանում աղքատի համար (տես՝ Սաղմ. 37:26, Առակ. 19:17, Մատթ. 5:42, Ղուկ. 6:35): Ուրիշների հանդեպ մարդու վերաբերմունքը հստակ հայտնում է Աստծո հետ իր փոխհարաբերությունը (տես՝ Սաղմ. 112:4):

112:6բ Այս տողի և Սաղմ. 112:3բ և 9բ-ի պատճառով, ինչ-որ առումով հանդերձյալ կյանքը և ոչ թե պարզապես Աստծո հիշատակն է ենթադրվում: Երկինքը պարզապես Աստծո մասին հիշողություն չէ, այլ Նրա հետ Իր ժողովրդի փոխհարաբերությունը (տես՝ Մատթ. 22:31-32):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 112:7-9

⁷Նա վատ լուրից չի վախենալու,
Նրա սիրտը պատրաստ է, ու նրա հույսը ՏԻՐՈՉ վրա է:
⁸Նրա սիրտը հաստատված է, չի վախենալու՝
Մինչև իր թշնամիների վրա նայի:
⁹Բաժանեց և աղքատներին տվեց.
Նրա արդարությունը հավիտյան է մնալու,
Նրա եղջյուրը պատվով է խոյանալու:

112:9ա Սա մեջբերված է (տես՝ 2 Կորնթ. 9:9) Պողոսի հեթանոսական եկեղեցիների կողմից Երուսաղեմի Մայր Եկեղեցուն միանվագ նվիրատվություն ուղարկելու մասին քննարկման մեջ (այսինքն՝ 2 Կորնթացիների 8-9):

112:9գ «եղջյուրը պատվով է խոյանալու» Սա ՀԿ-յան դարձվածք է հասարակության մեջ անձի դիրքի մասին: Այն մատնանշում է մարդու կարգավիճակը, հարստությունը և իշխանությունը Աստծո կողմից բարձրացնելու գործը: ՅԱՀՎԵՆ սա անում է թագավորների հետ 1 Թագ. 2:10-ում (նաև տես Սաղմ. 89:17,24) և Աննայի հետ՝ 1 Թագ. 2:1-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 112:10

¹⁰Մեղավորը տեսնելու ու վշտանալու է:
Իր ատամներն է կրճտացնելու ու հալչելու է:
Մեղավորների ցանկությունը կորչելու է:

112:10 «ատամները կրճտացնել» Սա բարկության նշան էր (տես՝ Սաղմ. 35:16, 37:12, 112:10, Ղուկ. 13:28): Նաև նկատի ունի դատաստանի փորձառությունը (տես՝ Մատթ. 8:12, 13:42,50, 22:13, 24:51, 25:30):

❖ **«հալչելու»** Ամբարիշտը կորչելու է (տես՝ Սաղմ. 68:2): Նրանք հալչելու են ՅԱՀՎԵԻ դատաստանի կրակի մեջ (տես՝ Եսայի 34:2-4):

Նրանց հոգեբանական ցավի պատճառը՝

1. իրենց բարգավաճ վիճակի հակադարձումն է
2. Աստծո թագավորությունից դուրս մնալն է
3. իրենց աչքերի առջև հավատարիմ հետևորդների օրհնությունն ու բարգավաճումն է

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ի՞նչ է նշանակում ՏԻՐՈՉԻՑ «վախենալ»:
2. Բացատրե՛ք Սաղմ. 112:4ա ձեր բառերով:
3. Արդյո՞ք Սաղմ. 112:3,6 և 9 խոսում է երկնքի մասին:
4. Ի՞նչ է նշանակում «մարդու եղջյուրը խոյանալ» (Սաղմ. 112:9):